ՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ (1834—1924 թթ.)

Ք. Ռ. ԱՎԱԳՅԱՆ

Հայերն Ամերիկայի Միացյալ Նահանգներ են գաղթել տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական հանգամանքներից դրդված։ Պատմական հավաստի փաստաթղթերից պարզվում է, որ առաջին անգամ սակավաթիվ հայեր Հյուսիսային Ամերիկա են ոտք դրել դեռևս XVII դ. սկզբին՝ անձնական դրդապատճառներով (1618 թ.՝ Ջոն Մարտին, 1653 թ.՝ Ջորջ և մի քանի այլ հայեր)[1]։

Հետագայում՝ XIX դ. առաջին կեսից, սկսվել է հայերի բուն հոսքը դեպի ԱՄՆ՝ ի հետևանս ամերիկյան բողոքական քարոզիչների՝ Օսմանյան Թուրքիայում ծավալած լուսավորչական գործունեության։ Օտար առաքելությունների համամիսիոներական ամերիկյան խորհուրդը, (American Board of Commissioners for Foreign Missions), որի նպատակն էր «Ավետարանը տարածել ի սփյուռս աշխարհի»[2], 1831 թ. Կ. Պոլսի Բեբեքի թաղամասում հաստատած Հայկական առաքելության միջոցով հիմնել է ավետարանական եկեղեցիներ, դպրոցներ, կոլեջներ, որտեղ իրականացվել են եվրոպական և ամերիկյան կրթական մակարդակի դասընթացներ ու քարոզներ։ Հիշարժան են Ռոբերտ կոլեջը (1862 թ., Կ. Պոլիս), Ամերիկյան համալսարանը (1864 թ., Բեյրութ), Կ. Պոլսի Աղջկանց կոլեջը (1873 թ., Կ. Պոլիս), Կենտրոնական Թուրքիայի կոլեջը (1876 թ., Այնթապ), Եփրատ կոլեջը (1878 թ., Խարբերդ), Կենտրոնական Թուրքիայի Աղջկանց կոլեջը (1882 թ., Մարաշ), Անատոլիա կոլեջը (1886 թ., Մարզվան), Սրբ. Պողոսի Հաստատությունը (1888 թ., Տարսոն) և այլն[3]։ Ամերիկյան գաղափարների «խաղաղ թափանցումին կերպը»[4] հանդիսացող այդ հաստատությունները մեծապես նպաստել են նաև հայ ուսանողների արևմտամետ աշխարհայացքի ձևավորմանը։ Միաժամանակ, անժխտելի է ամերիկյան բողոքական քարոզիչների ծավալած լուսավորչական գործունեության նշանակությունը Օսմանյան կայսրության դարավոր հետամնացության և նահապետական բարքերի գերիշխանության պայմաններում խարխափող հայության ազգային հոգեգիտակցական զարթոնքի գործում։ Հայ երիտասարդությունն աստիճանաբար իր հայացքը հառել է դեպի օվկիանոսի այն կողմ գտնվող ազատության և լայն հնարավորությունների երկիրը՝

---

* Այս թեմայով լույս են տեսել մի շարք աշխատություններ, որոնցից հիշարժան են՝ V. M. Malcom. The Armenians in America. Boston, Chicago, 1919; R. Mirak. Torn Between Two Lands Armenians in America, 1890 to World War I, Cambridge, 1983. Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 2. Երևան, 1967, Ն. Մանկունի, Ամերիկահայ գաղութի պատմությունից (Պատմա-բանասիրական հանդես, 1962, № 1), Գ. Սրապյան, ԱՄՆ-ի հայ գաղութի պատմությունից (Լրաբեր հասարակական գիտությունների, 1973, № 2), Գ. Հակոբյան, Հայերի գաղթը ԱՄՆ (Լրաբեր հասարակական գիտությունների, 1986, № 12), Նույնի՝ Հայերի տեղաբաշխումն ԱՄՆ-ում (XIX դ. վերջ—XX դ. սկիզբ), նույն տեղում, 1987, № 7։

[1] V. M. Malcom, The Armenians in America. Boston, Chicago, 1919. pp. 52—57.

[2] Մ. Գ. Ճիղմեճյան, Խարբերդ և իր դավակները, Ֆրեզնո, 1955, էջ 103։

[3] Ճակատագրական դեպքեր հայ պատմության մեջ, էջ 83։

[4] Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, 1990, էջ 55։

տեղի բարձրագույն կրթարաններում ժամանակակից մասնագիտություններ (հիմնականում՝ աստվածաբանություն, բժշկություն, տեխնիկա) ուսանելու և իր գիտելիքներն ի նպաստ ազգին ծառայեցնելու համար։

Ամերիկյան քարոզիչների ազդեցությամբ (1834 թ.) դեպի ԱՄՆ հայ ուսանողների շարժման սկզբնավորողը Կ. Պոլսի միսիոներական դպրոցի սան, տասնվեցամյա խաչատուր Օսկանյանն էր, որը, ավարտելով Նյու Յորքի համալսարանը, դարձել էր ճանաչված լրագրող հայկական, ապա ամերիկյան մամուլում։ Նա, լինելով առաջին հայ մտավորականը ԱՄՆ-ում և ծավալելով ազգանպաստ գործունեություն, անգլերեն հրատարակել է «Սուլթանն ու իր ժողովուրդը» գիրքը[5], ամերիկյան հասարակությանը ծանոթացրել հայոց պատմությանն ու մշակույթին, նաև զբաղեցրել բազմաթիվ պաշտոններ ամերիկյան տարբեր հաստատություններում (Նյու Յորքի մաքսատան գրագիր, Կոլումբիայի համալսարանի Իրավագիտության գրադարանի վարիչ, Նյու Յորքի Մամուլի ակումբի անդամ, ապա՝ նախագահ, Նյու Յորքում Օսմանյան Թուրքիայի հյուպատոս)[6]։

Հետագա տարիներին գլխավորապես ուսանելու նպատակով ԱՄՆ են մեկնել մի խումբ հայեր։ Այսպես՝ 1837 թ. Ամերիկա է եկել Կ. Պոլսի ավետարանական դպրոցի սան Սենեքերիմ Տեր-Մինասյանը, որը երկու տարի Փրինսթոնի համալսարանում հետևելով աստվածաբանության ճյուղին, ապա ուսանելով բժշկություն, վերադարձել է հայրենի երկիր[7]։

Այդ ժամանակաշրջանում հայերը ԱՄՆ են մեկնել նաև որպես բողոքական քարոզիչների սպասավորներ։ Այսպես՝ քարոզիչ Հ. Դուայթի սպասավոր Թագևոսյանը, 1841 թ. ժամանելով ԱՄՆ, զբաղվել է ռահաթ լոխումի արտադրությամբ՝ այն նորովի կոչելով «Թղի հալվա»։ Նույն թվականին ԱՄՆ է եկել և Նյու Յորքի աստվածաբանական դպրոց հաճախել Հարություն Վահրայանը, որն ավելի ուշ Կ. Պոլսում և Երուսաղեմում ստանձնել էր հայրապետի պաշտոն[8]։ 1842 թ. այդ նույն դպրոցում, ապա Իելի և Էնդովերի համալսարաններում է ուսանել Օսմանյան Թուրքիայում ամերիկյան քարոզիչների ազդեցությամբ բողոքականություն ընդունած առաջին հայը՝ Հովհաննես Տեր-Սահակյանը, որը նույնպես վերադարձել է Կ. Պոլիս և վարել բողոքական քարոզչի պաշտոն[9]։

1843 թ. ԱՄՆ է եկել ու քիմիայի, բժշկության, դեղագործության և այլ բնագավառներում մասնագիտացել Քրիստափոր Տեր-Սերոբյանը։ Նա ճանաչվել է որպես ամերիկահայ առաջին գյուտարար և կարևոր ծառայություն մատուցել ամերիկյան պետությանը՝ հայտնագործելով դոլարի դրամանանգման չենթարկվող յուրահատուկ սև և կանաչ ներկերը։ Ք. Տեր-Սերոբյանի գյուտն ամերիկյան կառավարության կողմից գնահատվել է որպես «աստվածային պարգև», քանի որ դրանով վերջ տրվեց խոշոր չափերի հասնող դրամանենգությանը։ Ք. Տեր-Սերոբյանը հետագայում վերադարձել է Թուրքիա և մինչև կյանքի վերջը պաշտոնավարել սուլթանական դրամահատարանում[10]։

Ամերիկա մուտք գործած առաջին հայերից է նաև Ղևոնդ Ալիշանի եղբայրը՝ Սերոբ Ալիշանը, որը 1845 թ. որոշ ժամանակ բնակվել է Վաշինգտոնում, ապա՝ Բոստոնում[11]։ Դեպի Ամերիկա եղբոր կատարած ճամփորդության

---

[5] J. H. Tashjian, The Armenians of the United States and Canada. Boston, 1947, pp. 13—14.

[6] Մուշեղ եպիսկոպոս, Ամերիկահայ տարեցույցը. Ա տարի, Բոստոն, 1912, էջ 16—18։

[7] Նույն տեղում, էջ 22։

[8] Նույն տեղում, էջ 23։

[9] Նույն տեղում։ L. Arpee, A History of Armenian Christianity from the Beginning to Our Own Time. New York, 1946, p. 266.

[10] Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 23—24։

[11] Նույն տեղում, էջ 24, 31—43։

առիթով Ղ. Ալիշանը երկարաշունչ մի բանաստեղծություն է ձոնել նրան՝ «Առ Հարազատն իմ. Ծովաշուրջ յԱմերիկա» վերնագրով.

Սիրով Սերոբիդ սիրտըս ձայն առած
Լուռ միայնութեան ճրագիկըն վառած՝
Գիշերէ գիշեր յանծանօթ ճամբայ
Մինչեւ յԱմերիկ քո հետ կը թրթռայ,
Որ թողած սրտիդ հատորն աղուական
Հազար փարախով կ'երթաս բացական...[12]։

1848—1850 թթ. ԱՄՆ է հասել և Բոստոնում ատամնաբուժություն ուսանել պոլսեցի Սարգիս Խաչատուրյանը, որը, հետագայում վերադառնալով իր ծննդավայրը, Կ. Պոլսի Բերայի թաղամասում հիմնել է «Ս. Խաչատուրյան և Որդի» ատամնաբուժարանը[13]։

Քանի որ ամերիկյան քարոզիչների սկզբնական գործունեությունը սահմանափակվում էր Կ. Պոլսում և շրջակա տարածքներում, շուրջ քսան տարի ԱՄՆ ժամանած մեկ տասնյակից ավելի հայ ուսանողները պոլսեցիներ էին, որոնք հիմնականում մասնագիտացել էին աստվածաբանության ու բժշկության, ինչպես նաև գիտության տարբեր ճյուղերում։ Նրանց համար ԱՄՆ-ը «կյանքի հանգրվան մը միայն եղած է, աշակերտության շրջան մը»[14]։ Հետո շատերը վերադարձել են հայրենի երկիր։

Ամերիկյան քարոզիչներն Օսմանյան Թուրքիայի հայության կրթական համակարգը ժամանակակից հիմքերի վրա դնելուց բացի, պակաս ջանք չեն գործադրել նաև հայ արհեստավորների հմտությունները զարգացնելու և կատարելագործելու ուղղությամբ՝ հիմնական նպատակ ունենալով բարենպաստ աշխատանքային պայմաններ ստեղծելու միջոցով արգելակել երկրից հայերի աստիճանաբար աճող արտահոսքը։ Այդ խնդրում մեծ ոեր է կատարել հանրահայտ քարոզիչ, Ռոբերտ կոլեջի հիմնադիր Սիրուս Համլինը՝ դպրոցներին կից բացելով ժամանակակից արտադրության մեթոդները ուսուցանող տարբեր արհեստանոցներ։ Նա կարծում էր, որ «այս աշխատասեր ժողովուրդը իր երկրին մեջ պահելու միակ միջոցը արհեստ ունենալն է, հետևաբար ուսման հետ արհեստն ալ սովորեցնելու է անոր»[15]։

Միևնույն ժամանակ, քարոզիչները մեծ մասամբ մտահոգված էին ամերիկյան բարձրագույն հաստատություններում կրթություն ստացած հայ երիտասարդության հայրենիք վերադառնալու հարցով՝ նրանց դիտելով որպես Օսմանյան կայսրության հայաբնակ տարածքներում նորանոր սերունդներ լուսավորելու գործում իրենց հետևորդներ։ Ուստի, շատ հաճախ ուսանողների արտահոսքը կանխելու նպատակով հրաժարվել են նրանց անգլերեն ուսուցանել և կամ արգելել Միացյալ Նահանգներ մեկնել[16]։

Այնուամենայնիվ, հակառակ գործադրված միջոցների, հայերի հոսքն Ամերիկա չի դադարել։ Տնտեսական բարեկեցության հասնելու հեռանկարները, ինչպես նաև նոր երկրում իրենց հայրենակիցների հուսադրող վիճակը ոգևորել են ոչ միայն հայ ուսանողներին, այլ, սկսած XIX դ. 50-ական թվականներից, նաև արհեստավորներին ու վաճառականներին։ Նրանց մեծ մասը շուտով վերադարձել է իր ծննդավայրը, իսկ ոմանք, հանդիպելով բարենպաստ տնտեսական պայմանների, հիմնվել են այնտեղ և, չխզելով կապը հայրենի

12 Նուագք Հ. Ղեւոնդեայ Մ. Ալիշանեան Մխիթարեան վարդապետի. Մաղթունի, Հ. Բ, Վենետիկ, 1857, էջ 39։

13 Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 26։

14 Նույն տեղում, էջ 30։

15 Նույն տեղում, էջ 27։

16 R. Mirak, Torn Between Two Lands. Armenians in America, 1890 to World War I. Cambridge, 1983, p. 37.

երկրի հետ, նյութական ու բարոյական օժանդակություն ցուցաբերել հայրենակիցներին, ինչպես նաև նպաստել իրենց բնօրրանների եկեղեցական, կրթական ու մշակութային կյանքի բարեկարգմանը։ Հիշատակման են արժանի ամերիկահայ բարեգործ վաճառական խասգյուղցի Սարգիս Մինասյանը[17] և տիգրանակերտցի մեծահարուստ Ասլան Սահակյանը։ Հակոբ Մաթևոսյանը Կ. Պոլիս էր փոխադրել նորագույն սարքավորումներով հագեցած խոշոր տպարան, իսկ Մինաս Կարապետյանը՝ կահույքագործության ժամանակակից արտադրությունը[18]։

Հայերն իրենց մասնակցությունն են ունեցել նաև ԱՄՆ-ի միավորման համար մղված Քաղաքացիական պատերազմին (1861—1865 թթ.)՝ Հյուսիսային բանակին տրամադրելով 30 կամավոր և զորակոչված մեկ շարքային զինվոր[19]։ Իսկ Ֆիլադելֆիայի հիվանդանոցներում անձնվիրաբար իրենց ծառայությունն են մատուցել շտապօգնության վիրաբույժներ Սիմոն Մինասյանը, Կարապետ Գալուստյանը, Պարոնիկ Մաթևոսյանը[20]։

Ընդհանուր առմամբ, 1850—1870 թթ. ԱՄՆ-ում կար ավելի քան 55 հայ[21], իսկ 1870-ական թվականների սկզբներին նրանց թիվը հասել էր 70-ի[22]։

1876 թ. Օսմանյան Թուրքիայում սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահակալության և 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով հայերի նկատմամբ սկսված հալածանքներն ու տնտեսական կյանքի անկումը, ինչպես նաև հայաբնակ խոշոր կենտրոններում ամերիկյան քարոզիչների հոգևոր ու կրթական գործունեության ծավալումը խթանել էին հայերի հետագա արտահոսքը երկրի գրեթե բոլոր շրջաններից՝ ընդգրկելով ոչ միայն ուսանողների, արհեստավորների ու վաճառականների, այլև ծանր. հարկերի տակ կքած գյուղացիների և ունեզրկված գործավորների։ Նրանց մեծ մասը, որոշ կարողության տեր դառնալուց հետո, ձգտել է վերադառնալ հայրենի բնակավայրեր՝ բարելավելու իրենց ընտանիքների նյութական վիճակը[23]։

XIX դ. 80-ական թվականներից հայերի՝ դեպի ԱՄՆ սկսած այդ նոր, զգալի հոսքը սկզբնավորել են խարբերդցիները, որոնց թիվը հետագա տարիներին, այլ շրջանների հայերի թվի համեմատ, առավել մեծ չափերի է հասել, քանի որ Խարբերդի հարթավայրը, որն Օսմանյան Թուրքիայում «ամենից հարուստ երկիրն էր և ամենից հրապուրող ու խոստումնալից քարոզչական տարածքը», 1852 թ. սկսած դարձել էր արևելյան Թուրքիայում ամերիկյան քարոզիչների գործունեության կենտրոնատեղին[24]։ Միաժամանակ, այդտեղ էր գտնվում նաև 1878 թ. հիմնված հանրահայտ Եփրատ կոլեջը, որը «լուսավորության մեծ հաստատություն մը եղավ տասնյակ տարիներով»[25]։

Դեպի Նոր աշխարհ խարբերդցի հայերի հոսքը ուներ նաև տնտեսական նախապայմաններ, քանի որ նրանք «քիչ թե շատ բարեկեցիկ ըլլալով, Ամերիկա գաղթելու անմիջական հարկադրության տակ չէին»։ Հետևաբար, «որքան ատեն որ կյանքը իր բնականոն հունին մեջ էր, Խարբերդի հայությունը գաղթելու մասին չէր մտածեր, բայց երբ բնակչության աճման հետևանքով ապրուստի պայմաններն ալ դժվարացան, այն ատեն երիտասարդ թե ամուս-

---

17 Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 26։

18 Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 26, 28։

19 J. H. Tashjian, նշվ. աշխ., էջ 15, 55։

20 Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 28։

21 J. H. Tashjian, նշվ. աշխ., էջ 15։

22 Մուշեղ եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 33։

23 R. Mirak, նշվ. աշխ., էջ 36, 40։ N. Buxton, Rev. H. Buxton. Travel and Politics in Armenia London, 1914, p. 220.

24 R. Mirak, նշվ. աշխ., էջ 40։

25 Վ. Հայկ, Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը, Նյու Յորք, 1959, էջ 338։ Լ. Մարտիրոսյան, Ամերիկահայությունը երեկ և այսօր, Բեյրութ, 1973, էջ 8։

նացած մարդիկ՝ ամերիկյան միսիոնարներու դրախտային նկարագրություններեն հրապուրված՝ թողուցին իրենց ծնողքին ու ընտանիքը և ամեն վտանգ աչքի առած ուղղվեցան Ամերիկա»[26]. Աշխատանք որոնող այդ նոր պանդուխտների առջև բացված տնտեսական բարենպաստ պայմանները պատճառ դարձան շատ շատերի ԱՄՆ-ում հաստատվելուն[27]։

XIX դ. վերջից ԱՄՆ-ը դարձել էր նաև քաղաքական ապաստան և գործունեության ազատ դաշտ հայ հեղափոխական և նորաստեղծ քաղաքական կուսակցական (հնչակյան, դաշնակցական) գործիչների համար, որոնք այդտեղ հաստատվելով, որպես ամերիկյան քաղաքացիներ, անարգել մուտք են գործել Թուրքիա և հեղափոխական գործունեություն ծավալել հայերի շրջանում։ Ահա թե ինչու, թուրքական պետությունը, որը մինչ այդ որոշակի ընդգծված քաղաքականություն չուներ ԱՄՆ մեկնող հայերի նկատմամբ, շուտով, դրսից ներթափանցող հեղափոխական վտանգից խուսափելու նպատակով, պարբերաբար սահմանափակումներ է մտցրել, իսկ երբեմն էլ՝ ընդհանրապես արգելել հայերի գաղթն Ամերիկա[28].

Այսպիսով, XIX դ. 80-ական թվականներից սկսել է մեծ չափերի հասնել հայերի արտահոսքը ԱՄՆ՝ Օսմանյան Թուրքիայի գրեթե ամբողջ տարածքից՝ ընդգրկելով բազմաթիվ առևտրականների, արհեստավորների, գյուղացիների և աշխատանք որոնողների, ինչպես նաև ուսանողների ու քաղաքական փախստականների։ Ընդ որում, «ամերիկյան տենդը» տարածվել էր գլխավորապես ամուրի երիտասարդության շրջանում. նրանք հայրենիքում թողնում էին իրենց հարազատներին և մեկնում օտար ափեր՝ աղատություն և հարստություն ձեռք բերելու հույսով, որպեսզի, վերադառնալով, կարողանային բարելավել ընտանիքների կացությունը։

Միևնույն ժամանակ, այդ նոր պանդուխտներից շատերը ԱՄՆ-ում զբաղելով տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական աղատություն ու բարեկեցություն, հաստատվել են այնտեղ, նվազեցնելով հայրենիք վերադարձողների թիվը, ինչպես նաև իրենց հայրենակիցներին ուղարկած ոգևորիչ նամակներով և դրամական օգնությամբ նպաստել դեպի Ամերիկա նորանոր հայերի տեղաշարժին։ «...Առաջին հայը Ամերիկայեն երբ հիսուն ոսկիի չեք մը ղրկեց իր տունը, զայն տեսնող և լսող հայերուն սիրտերը թունդ եւլան... ու այնուհետև ամեն հայ փափաքեցավ Ամերիկա գալ, իր քայքայված տնտեսությունը վերականգնելու համար։ Եվ, ահա այսպես, երկրեն սկսեց արտագաղթը դեպի Ամերիկա։ Այս օրերուն ամեն հայու բերնին ծամոց էր եղած ըսելու։—

Տերտեր կա նը՝ մեղքն ի՞նչ է.
Ամերիկա կա նը՝ պարտքն ի՞նչ է...

Եվ հետզհետե երկրեն Ամերիկա եկողներուն համակրանքը ա՜յնքան բազմացավ որ Կ. Պոլսո Հայոց Պատրիարքարանը և Բ. Դուռը տեսնելով դանոնք սարսափեցա՜ն...»[29]։

Արդյունքում՝ անցյալ դարավերջին «բախտ որոնելու եկած» պանդուխտ հայերը, մշտական բնակություն հաստատելով ԱՄՆ-ում, աստիճանաբար երկրի հյուսիս-արևելյան նահանգներից տարածվել են դեպի միջին և արևմտյան նահանգներ։ Ամերիկյան կյանքին ընտելացած հաջողակ, կրթված ու գործարար հայերը պայմաններ են նախապատրաստել հետագա տասնամյակներին պատմական ստիպողական հանգամանքների բերումով գաղթի դիմած հազարավոր հայրենակիցներին նյութական և բարոյական աջակցություն

---

26 Լ. Մարտիրոսյան, նշվ.աշխ., էջ 10, 12։

27 R. Mirak, նշվ. աշխ., էջ 41։

28 Նույն տեղում, էջ 42, 43։

29 Ասպարեզ, Հինգամյակ. 1908—1958, Ֆրեզնո, 1958, էջ 293։

ցույց տալու, ինչպես նաև համախմբելու և որպես համայնք կազմակերպելու ուղղությամբ։

Մինչև 1899 թ. ԱՄՆ մեկնած հայերի ստույգ թիվը դժվար է որոշել, քանի որ 1820—1898 թթ. ԱՄՆ մուտք գործած բոլոր գաղթականները համապատասխան գրասենյակներում գրանցվել են ոչ թե ըստ ազգային պատկանելության, այլ ըստ աշխարհագրական ծագման, այսինքն՝ համաձայն իրենց գաղթած երկրների[30]։ Ընդ որում, Օսմանյան Թուրքիայից գաղթածները մինչև 1868 թ. գրանցվել են որպես «Եվրոպական Թուրքիայից», իսկ 1869 թվից՝ նաև «Ասիական Թուրքիայից» և «Հայաստանից» եկածներ[31]։ Հետևաբար, տվյալ ժամանակահատվածում Ամերիկա մուտք գործած հայերի թիվը խիստ հարաբերական է։ Միայն 1899 թվականից է, որ գաղթականները սկսել են գրանցվել ըստ իրենց ազգային պատկանելության, դրանով իսկ որոշակի դարձնելով ԱՄՆ գաղթած հայերի թիվը[32]։

Հայերի հոսքն Ամերիկա առավել մեծ չափերի է հասել XIX դ. 90-ական թվականներից սկսած։ Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ ծավալված բռնությունների ու կոտորածների հետևանքով նախկինում դեպի ԱՄՆ հայերի իրականացրած անհատական տեղաշարժը վերածվել է զանգվածային գաղթի։ Ֆիզիկական բնաջնջման վտանգից խուսափող հայերի այդ սրտագաղթը, որում մեծ թիվ են կազմել հողամշակները, քաղաքների ու ավանների արհեստավորներն ու բանվորները, ներառել է կայսրության հայաբնակ շրջանները՝ Խարբերդ, Սվազ, Էրզրում, Տրապիզոն, Բիթլիս, Կիլիկիա և այլն[33]։ 1834—1894 թթ. ԱՄՆ են եկել շուրջ 4.000 հայեր, որոնք կազմել են տվյալ ժամանակահատվածում Օսմանյան Թուրքիայից Ամերիկա մեկնած գաղթականների ընդհանուր թվի (9.472 մարդ) զգալի մասը[34]։ Եթե սրանից հանենք նաև այդ ընթացքում հայրենի բնակավայրերը վերադարձած մոտավորապես 1.000 մարդու, ապա 1894 թ. ԱՄՆ-ում կլիներ շուրջ 3.000 հայ, որոնք հիմնականում հաստատվել էին Նյու Յորքում, Ուորքեսթերում, Լիննում, Բոստոնում, Փրովիդենսում, Հարթֆորդում, Ֆիլադելֆիայում, Հոբոքենում, Թրոյում, Չիկագոյում, Ֆրեզնոյում և այլուր[35]։

Ամերիկյան գաղթականության հանձնախմբի տվյալներով, եթե մինչև 1894 թ. «Ասիական Թուրքիայից» եկածների թիվը խիստ նվազել էր, ապա 1895—1898 թթ. նրանց թիվը կտրուկ աճել էր՝ կազմելով շուրջ 15.913 մարդ[36]։ Միաժամանակ, կասկածից վեր է, որ տվյալ ժամանակահատվածում նշված տարածքից մեկնած գաղթականների գերակշիռ մասը՝ ավելի քան 10.000 մարդ[37], համիդյան ջարդերից ճողոպրած հայերն էին։ Իսկ արդեն 1900 թ. ԱՄՆ-ում կար 15.000—20.000 հայ[38]։

ԱՄՆ-ը հանգրվան է դարձել նաև Ռուսական կայսրությունից եկած բազմաթիվ հայերի համար, որոնք Նոր աշխարհի մասին տեղեկացել էին XIX դ. Ռուսաստանից Կովկաս աքսորված և հատկապես Շիրակի դաշտավայրում բնակեցված դուխոբորներից ու մոլոկաններից։ Վերջիններիցս շատերն անցնելով Կանադայի Ուինեբեգ, իսկ մյուսները՝ Միացյալ Նահանգների Լոս Ան-

---

30 Ն. Լ. Մանկունի, Ամերիկահայ գաղութի պատմությունից, «ՊԲՀ», № 1, Եր., 1962, էջ 95։

31 R. Mirak, նշվ. աշխ., էջ 288։

32 V. M. Malcom, նշվ. աշխ., էջ 66։

33 R. Mirak, նշվ. աշխ., էջ 46։

34 V. M. Malcom, նշվ. աշխ., էջ 64, 76։

35 Նույն տեղում։

36 Նույն տեղում, էջ 66։

37 R. Mirak, նշվ. աշխ., էջ 47, 290։

38 V. M. Malcom, նշվ. աշխ., էջ 65։ The Armenian Image in History and Literature, ed. R. Hovannisian. Malibu, 1981, p. 255.

չելես քաղաքները, կովկասյան իրենց ընկերներին և Հարևան Հայերին ուղարկած հուսագրող նամակներով խրախուսել են նրանց մեկնելն այդ վայրերը[39]։

Դեպի ԱՄՆ արևելահայ պանդխտության նախակարապետները 1904 թ. Կարսի Ղարաղալա գյուղից հեռացած Մուշեղյաններն էին, որոնց շուտով հետևել է գյուղի գրեթե ամբողջ բնակչությունը։ Հետագա տարիներին զգալի թվով հայեր են մեկնել նաև Ալեքսանդրապոլի Հարակից գյուղերից։ Սրանց մեծ մասը նպատակ ուներ Նոր Երկրում ժամանակավորապես աշխատել և դրամ վաստակելուց հետո վերադառնալ հայրենի օջախներ[40]։ Միաժամանակ, դարասկզբին Ռուսական կայսրությունում և Կովկասում տիրող տնտեսական և քաղաքական ճգնաժամն ընդլայնել է արևելահայության տեղաշարժը դեպի օտար ափեր՝ ներառնելով նաև Իգդիրից, Կողբից, Թիֆլիսից, Ղարաբաղից, Երևանից և այլ վայրերից եկած մի խումբ հայերի։ Նրանք հիմնականում բնակություն են հաստատել ԱՄՆ-ի արևմտյան ափին՝ Լոս Անջելես քաղաքում։ Արևելահայերի հոսքն Ամերիկա առավել մեծ չափերի է հասել հատկապես 1908 թ. սկսած և նվազել՝ կապված առաջին աշխարհամարտի հետ[41]։

Այսուհանդերձ, արևելահայերի հոսքը դեպի ԱՄՆ, ի հակադրություն արևմտահայերի, մեծ չափերի չի հասել, ինչը բացատրվում է Ռուսական կայսրությունում առկա ազգային նվազ հալածանքներով ու տնտեսական համեմատաբար բարվոք վիճակով։ Այսպես, 1900—1905 թթ. ԱՄՆ էր մեկնել 50, 1905—1910 թթ.՝ շուրջ 300, 1910—1913 թթ.՝ 1.200 արևելահայ՝ մինչև առաջին աշխարհամարտ ԱՄՆ մուտք գործած ռուսահայերի ամբողջ թիվը կազմելով ոչ ավելի քան 2.500 մարդ[42]։ Այս հոսքը նվազել է պատերազմի տարիներին և չնչին չափերով ավելացել ռուսական պետությունում 1917 թ. առաջացած քաղաքական խառնաշփոթ իրավիճակի հետևանքով։ Այսպես, արդեն 1920—1924 թթ. ԱՄՆ գաղթած ամբողջ 20.659 հայերից ընդամենը 168-ն էին եկել Ռուսաստանից[43]։

Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ի Գաղթականական գրասենյակի տվյալներով, 1899—1924 թթ. Ռուսաստանից Ամերիկա էր մեկնել ավելի քան 3.500 հայ[44]։

1908 թ. Օսմանյան Թուրքիայում երիտթուրքերի իշխանության հաստատումով նրանց կողմից «դեմոկրատական ազատություններին» հռչակումով նվազել, սակայն չի դադարել հայերի գաղթը ԱՄՆ։ Այն կրկին մեծ չափեր է ընդունել մեկ տարի անց՝ Աղանայի զարհուրելի ջարդերի հետևանքով, երբ կյանքի ու գույքի անապահովությունը գաղթականության են մղել ոչ միայն կիլիկիահայությանը, այլև ֆիզիկական բնաջնջման սարսափն իրենց աչքի առաջ ունեցող Օսմանյան կայսրության գրեթե բոլոր շրջանների հայերին։

Ընդհանուր առմամբ, մինչև առաջին աշխարհամարտ, դեպի ԱՄՆ հայության հոսքը տարեցտարի զգալի չափով աճել է և 1899—1914 թթ. Ամերիկա արտագաղթած հայերի թիվը կազմել է 51.950 մարդ[45]։ Ընդ որում, գերակշռել են ընտանիքները հայրենիքում թողածները (50 %), ամուրիները 37 % են, ընտանիքով եկածները՝ 13 %[46]։

Պատերազմի տարիներին գաղթականության նկատմամբ Օսմանյան Թուրքիայում վերականգնված արգելքի հետևանքով քիչ թվով հայերի է հա-

---

39 R. Mirak, նշվ. աշխ., էջ 49, 57։

40 Ս. Գալոյան, Շիրակի հայերի գաղթը դեպի Ամերիկա, Լոս Անջելես, 1950, էջ 65, 72, 58, 76, 101։

41 R. Mirak, նշվ. աշխ., էջ 38։

42 Նույն տեղում։ Harvard Encyclopedie of American Ethnic Groups. Cambridge, London, 1981, p. 139.

43 Recent Studies in Modern Armenian History, Cabmridge, 1972, p. 111.

44 Թ. Լոդիկ, Ամենուն տարեցույցը. Վենետիկ, 1926, էջ 586։

45 V. M. Malcom, նշվ. աշխ., էջ 65։

46 Արշալույս պատկերազարդ տարեգիրք, Ա տարի, Ֆրեզնո, 1922, էջ 47։

ջողվել մուտք գործել ԱՄՆ, որոնք հիմնականում 1915 թ. զանգվածային տեղահանություններից ու ջարդերից մազապուրծ թշվառներն էին՝ հարազատներին կորցրած, մասնատված ընտանիքներ, որբեր։ Այնպես որ, եթե միայն 1914 թ. ԱՄՆ է գաղթել 7.785 հայ[47], ապա հետագա տարիներին նրանց թիվը կտրուկ կերպով նվազել է՝ 1915—1919 թթ. կազմելով ընդամենը 3.620 մարդ[48]։ Արդեն պատերազմի ավարտին ԱՄՆ-ում կար շուրջ 78.000 հայ[49]։

Հետագայում Օսմանյան Թուրքիայում սկսված քեմալական շարժման վերելքը, որն ուղեկցվել է հայերի պարբերական ջարդերով ու տեղահանություններով, ինչպես նաև Անդրկովկասում Հայաստանի Առաջին Հանրապետության (1918—1920 թթ.) անկումը նոր թափ են հաղորդել դեպի ԱՄՆ հայերի գաղթին, 1920 թ. ընդգրկելով 2.762, իսկ 1921 թ.՝ արդեն 10.212 մարդ[50]։ Վերջինս ամենից բարձր ցուցանիշն էր նախորդ բոլոր տարիների համեմատությամբ։ Միևնույն ժամանակ, եթե մինչև 1919 թ. ԱՄՆ գաղթած հայերի զգալի մասը՝ շուրջ 76 %-ը, տղամարդիկ էին և միայն 24 %-ը՝ կանայք, ապա 1921 թ.՝ ընդհակառակը. աճել էր կանանց թիվը և նվազել՝ տղամարդկանցը։ Ընդ որում, գաղթողները հիմնականում 16—45 տարեկան էին և մեկնել էին ընտանիքների վերամիավորման նպատակով։ Կանայք կազմել են 52 %-ը. տղամարդիկ՝ 27 %-ը, երեխաները՝ 21 %-ը։ Այդ թվում էին նաև հայկական ամերիկյան բարեգործական կազմակերպությունների, ինչպես նաև արևմտյան քարոզիչների կողմից թուրքական հարեմներից, ոչ քրիստոնյա ընտանիքներից, ճամբարներից ու որբանոցներից հավաքագրված հայերը[51]։

Առաջին աշխարհամարտի հետևանքով միջազգային ասպարեզում ստեղծված քաղաքական որակապես նոր հարաբերությունները պատճառ են դարձել ամերիկյան գաղթականական օրենքների պարբերաբար վերանայման, ինչը խիստ սահմանափակել է նաև հայերի գաղթը։ Այսպես՝ 1921 թ. Առաջին քվոտայի օրենքով տարեկան Միացյալ Նահանգներ կարող էր գաղթել շուրջ 350.000 մարդ[52], ընդ որում, միայն 2.757 հայ[53]։ Դա կազմում էր 1910 թ. մարդահամարի համաձայն ԱՄՆ-ում բնակվող յուրաքանչյուր ազգի համար 3 % բաժին[54]։ Միաժամանակ, որպես մարդասիրական նպատակներով կատարված բացառություն, Մերձավոր արևելքում դեգերող գաղթական հայերի համար Միացյալ Նահանգների իշխանությունների կողմից լրացուցիչ հատկացվել է որոշակի հավելյալ բաժին[55]։

1924 թ. նոր՝ Ազգային ծագումների քվոտայի օրենքով նորից է կրճատվել ԱՄՆ մուտք գործել ցանկացողների թիվը՝ տարեկան կազմելով ընդամենը 150.000 մարդ, այսինքն՝ 1920 թ. մարդահամարով ԱՄՆ-ում բնակվող յուրաքանչյուր ազգի համար 2 % բաժին[56]։ Ըստ այդ օրենքի, Հայաստանից ԱՄՆ կարող էր գաղթել ընդամենը 124 հայ։ Միաժամանակ, հայերը մեկնել են նաև իրենց բնակված երկրներին հատկացված բաժիններով[57]։ Վերացվել էր հայ որբերին ու փախստականներին բացառության կարգով մուտքի արտոնություն շնորհելու որոշումը։ Այնուհետև նրանք գաղթել են Ազգերի Լիգային

---

47 V. M. Malcom. նշվ. աշխ., էջ 63։

48 Նույն տեղում։ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 585։

49 The Armenian Image in History and Literature, p. 255.

50 Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 585։

51 Harvard Encyclopedia of American Ethnic Groups, p. 139.

52 D. P. Danilov. Immigrating to the U. S. A. Canada, 1983, p. XVIII.

53 A. S. Yeretzian. A History of Armenian Immigration to America with Special Reference to Conditions in Los Angeles. A Thesis. California, 1923, p. 18.

54 Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 585։

55 A. S. Yeretzian, նշվ. աշխ., էջ 18։

56 D. P. Danilov, նշվ. աշխ., էջ XVIII.

57 Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 585։

պատկանող Նանսենյան անձնագրերով[58]։ Այնպես որ, տվյալ ժամանակաշրջանում ԱՄՆ-ի մուտքի թույլտվություն ստացած գաղթական հայերի թիվը համապատասխանել է վերոհիշյալ սահմանափակումներին՝ 1922 թ. կազմելով 2.349, 1923 թ.՝ 2.396, իսկ 1924 թ.՝ 2.940 հայ[59]։

Ընդհանուր առմամբ, 1914—1924 թթ. ԱՄՆ է գաղթել 32.064 հայ, որով և 1924 թ. ԱՄՆ-ում բնակվող հայության ընդհանուր թիվը հասել է ավելի քան 125.000-ի[60]։

Տասնամյակների ընթացքում հայերը հաստատվելով Միացյալ Նահանգներում՝ տարածվել են լայնածավալ երկրով մեկ և բնակություն հաստատել նրա գրեթե բոլոր նահանգներում։ Օբյեկտիվ (լեզվի չիմացություն, նոր բարքերին հարմարվելու դժվարություններ, ինչպես նաև աշխատանքային բարենպաստ պայմանների առկայություն) և սուբյեկտիվ (ազգային նկարագիրը պահպանելու և ուծացումից զերծ մնալու ձգտում) հանգամանքներից ելնելով՝ հայ գաղթականների գերակշիռ մեծամասնությունը հակված է եղել հաստատվել ազգային համախմբումներ ունեցող նահանգներում ու քաղաքներում։ Այսպես, 1923 թ. ամերիկահայերի 90 %-ը տեղաբաշխված էր հետևյալ նահանգներում՝ Նյու Յորք, Մասսաչուսեթս, Ռոդ Այլենդ, Իլլինոյս, Կալիֆոռնիա, Փենսիլվանիա, Միչիգան, Նյու Ջերսի, Կոնեկտիկուտ, Ուիսկոնսին։ Այս նահանգների առավել հայաբնակ քաղաքներն էին Նյու Յորքը, Բոստոնը, Ֆրեզնոն, Դետրոյտը, Փրովիդենսը, Ուորքեսթերը, Ֆիլադելֆիան, Չիկագոն, Թրոյը։ Հայաշատ քաղաքներից էին նաև Ուեսթ Հոբոքենը, Ջերսի Սիթին, Քլիվլենդը, Լոս Անջելեսը, Փրովիդենսը, Լիննը, Հարթֆորդը, Բրիջփորթը, Նյու Հեվնը, իսկ հարյուրից ավելի հայ ունեցող քաղաքներից էին Սիեթլը Փորթլենդը և այլն[61]։ Ընդ որում, գաղթականներն առավելապես նախընտրել են բնակություն հաստատել արդյունաբերական քաղաքներում։

Այսպիսով՝ սկզբնական շրջանում անհատական հոսքի տեսք ունեցող հայերի տեղաշարժն ԱՄՆ աստիճանաբար վերածվել է զանգվածային զաղթի՝ ի հետևանս Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ գործադրված պարբերական ջարդերի (1894—1896 թթ., 1909 թ., 1915 թ., 1920—1922 թթ.), ընդգրկելով տնտեսական, քաղաքական ու կրոնական ապահով կյանքի հեռանկարներից զրկված և հասարակության ու սեռատարիքային բոլոր շերտերը ներառնող տասնյակ հազարավոր հայերի։ Իսկ առաջին աշխարհամարտի հետևանքով Օսմանյան Թուրքիայում և ցարական Ռուսաստանում ստեղծված քաղաքական անկայուն ու ճգնաժամային իրավիճակը, ինչպես նաև դաշնակից տերությունների նկատմամբ հայերի ունեցած հավատի կորուստն ի չիք են դարձրել ԱՄՆ գաղթած, սակայն հայրենիք վերադառնալու հույսը դեռևս իրենց հոգու խորքում անթեղած բազմահազար հայերի երազանքները՝ նրանց վերջնականապես ամրացնելով ասպնջական նոր երկրին։

---

58 Harvard Encyclopedia of American Ethnic Groups, p. 139.

59 Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 585։

60 Նույն տեղում, էջ 585, 589։

61 Նույն տեղում, էջ 588, A. S. Yeretzian, նշվ. աշխ., էջ 19։

ИММИГРАЦИЯ АРМЯН В СОЕДИНЕННЫЕ ШТАТЫ АМЕРИКИ (1834—1924 ГГ.)

К. Р. АВАКЯН

Резюме

Армяне появились в Северной Америке еще в XVII веке.

В результате просветительской деятельности американских миссионеров в Османской Турции с 1834 г. в США прибывает первый поток студентов армян для обучения в высших учебных заведениях.

Обретя свободу и процветание в экономической, политической, культурной и религиозной жизни, армяне постепенно обосновываются на новой гостеприимной земле.

Периодические массовые истребления армян в османской империи в конце XIX—начале XX веков в сущности способствуют массовой иммиграции в США.

Таким образом, с 1834 по 1924 гг. в США иммигрировало около 100 тыс., а уже в 1924 году там проживало более 125 тыс. армян.